

## ՈՒՂԵՑՈՒՅՑ 9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2011-2012 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստերի առաջադրանքները կազմված են հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

### ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

#### 1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են երեք ձևով՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանները կարող են լինել՝

- թվային արժեք,
- բանաձև կամ որևէ մեծության չափման միավոր,
- բառ, բառաշարք կամ բառակապակցություն,
- առաջադրանքի տարրերը համարակալող թվերի կամ տառերի դասավորություն, համապատասխանություն:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված գրառել առաջադրանքի պահանջը, ներկայացնել կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով):

| Ներկայացման ձևը     | Առաջադրանքի համարը | Ընդհանուր միավորը |
|---------------------|--------------------|-------------------|
| Ընտրովի պատասխանով  | 1-22               | 22                |
| Կարճ պատասխանով     | 23-30              | 8                 |
| Ընդարձակ պատասխանով | 31-35              | 5                 |

#### 2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

| Չ/հ      | Թեմա                         | Միավորներ |
|----------|------------------------------|-----------|
| 1        | Մեխանիկական երևույթներ       | 16        |
| 2        | Ջերմային երևույթներ          | 6         |
| 3        | Էլեկտրամագնիսական երևույթներ | 6         |
| 4        | Օպտիկական երևույթներ         | 3         |
| 5        | Ատոմային միջուկի կառուցվածքը | 2         |
| 6        | Աստղագիտության տարրերը       | 2         |
| ԸՆԴԱՄԵՆԸ |                              | 35        |

### 3. Ցուցումներ

- ա) Կարճ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների պատասխանները, եթե առաջադրանքում չկա լրացուցիչ ցուցում, պետք է բերված լինեն ՄՅ միավորների:
- բ) Ընդարձակ պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուր ենթաառաջադրանքի (36-40-րդ) ճիշտ կատարման համար տրվում է 1 միավոր (առանց խնդրի լուծման ողջ ընթացքը ներկայացնելու, միայն վերջնական պատասխանի գրառման համար միավոր չի տրվում):
- գ) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել.  $\pi = 3,14$ ;  $\pi^2 = 10$ ;  $\sqrt{2} = 1,4$ ;  $\sqrt{3} = 1,7$ , իսկ  $g = 10$  Ն/կգ:
- դ) 24-րդ առաջադրանքը կատարելիս պատասխանների ձևաթղթում առաջադրանքի համարի մոտ տրված աղյուսակի համապատասխան վանդակներում որպես պատասխան պետք է գրառել ընտրված հասկացությունների միայն համարները:

### Օրինակ`

#### 24. Ա և Բ խմբերից կատարելով ընտրություն` ստացե՛ք մեկ ճիշտ համադրություն:

Էներգիայի ի՞նչ փոխակերպում է տեղի ունենում, երբ

- Ա** 1) գետը հոսում է թեք հարթությամբ  
2) գնդակը շարժվում է դեպի վեր  
3) քարը վայր է ընկնում
- Բ** ա) պոտենցիալ էներգիան` կինետիկ էներգիայի  
բ) կինետիկ էներգիան` պոտենցիալ էներգիայի

Պատ`

|   |   |
|---|---|
| Ա | Բ |
| 2 | բ |